

**ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-18/42**

ք. Երևան

«18» հուլիսի 2018թ.

«Վ. Ա. Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ, ի դեմս Ա. Տանանյան-ի, որը գործում է «Վ. Ա. Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության գործադիր տնօրեն Գ.Արշակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Վ. Ա. Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ-ի ճառագայթային կենտրոնի 3-րդ հարկում գտնվող տեխնիկական հարկում յոդաթերապիայի բաժնի շինարարական աշխատանքների որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները ներկայացված են պայմանագրի **N 4 Հավելվածում**<sup>1</sup>:

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով<sup>2</sup>:

### **3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### **4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 296400 (երկու հարյուր իննսունվեց հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն<sup>3</sup>:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 2020 թվականի դեկտեմբերի 20-ը:

### **5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

<sup>1</sup> Կիրառվում է, եթե կնքվում է շինարարական ծրագրի կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագիր:

<sup>2</sup> Կիրառվում է, եթե կնքվում է շինարարական ծրագրի կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագիր:

<sup>3</sup> Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով<sup>4</sup>:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## **6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից՝ յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

<sup>4</sup> Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում փուլաբար հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար փյալ փարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է \_\_\_\_\_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:<sup>5</sup>

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ԳՆՈՐԴ

ք. Երևան, Ֆանտոզյան 76 զ  
<<Արդշինբանկ >> ՓԲԸ Առևտրային  
</< 2471202012460000  
<ՎՀՀ 01002804  
էլ. հասցեն՝ [nco-sumner@gmail.com](mailto:nco-sumner@gmail.com)  
հեռ. 010-28-77-92

/ստորագրություն/  
Կ.Տ

### ՎԱՃԱՌՈՂ

«ՀՀ նախագծերի պետական  
արտագերատեսչական փորձաքննություն»  
ՓԲԸ  
հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 54բ  
հ/հ 2473700277210010  
ԱՇԲ Նաիրի մ/ճ  
<ՎՀՀ 01508665

Գործադիր տնօրեն՝ Գ. Արշակյան

/ստորագրություն/  
Կ.Տ 08665

<sup>5</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ\*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
					հասցեն	Ժամկետը**
1	71351540/503	դրամ.	296400	1	<<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ ք. Երևան Ֆանարջյան 76շ. ճառագայթային կենտրոն	2018թ. հուլիսի 02-ին կնքված թիվ՝ ՈՒԱԿ-ԲՄԱՇՁԲ-18/33 պայմանագրով նախատեսված Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ-ի ճառագայթային կենտրոնի 3-րդ հարկում գտնվող տեխնիկական հարկում յոդաթերապիայի բաժնի շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց)

**տեխնիկական բնութագիրը**

**Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ-ի ճառագայթային կենտրոնի 3-րդ հարկում գտնվող տեխնիկական հարկում յոդաթերապիայի բաժնի շինարարական աշխատանքների որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություն.**

(Պայմանագիր՝ <<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ-ի և <<Ազարակ>> ԲԲԸ-ի միջև ՈՒԱԿ-ԲՄԱՇՁԲ-18/33 ծածկագրով 2018թ. հուլիսի 02-ին. կնքված <<Կապալային աշխատանքների կատարման պայմանագիր>>)

Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի պատվիրատուի կողմից տրամադրվող նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա և պետք է ապահովի շինարարական աշխատանքների իրականացումը անհրաժեշտ որակով և ինժեներական նախագծերին, տեխնիկական սպեցիֆիկացիաներին և այլ պայմանագրային փաստաթղթերին համապատասխան:

2. Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում:

3. Տեխնիկական հսկողի հիմնական պարտականություններն են՝

- շինարարության սկզբից մինչև ավարտը ընկած ժամանակահատվածում պարբերաբար լուսանկարահանել շինարարության օբյեկտի վիճակը,
- ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը շինարարական նորմերին և կանոններին,
- Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման շեղում հայտնաբերելուց անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելով համապատասխան հիմնավորումը,
- ստուգել և հաստատել բանվորական գծագրերը՝ նախապատրաստված Կապալառուի կողմից,
- ստուգել և վերահսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի սպեցիֆիկացիաներում և պայմանագրային մյուս փաստաթղթերին համապատասխանությունը: Արգելվել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պայմաններին,
- վերահսկել և գնահատել շինարարական աշխատանքների գործընթացը, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի,
- ստուգել բոլոր այն փորձարկումների արդյունքները , որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: Ստուգել բոլոր հաշվարկները, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար,
- ստուգել բոլոր ծավալային չափերը և հաշվարկները, որոնք անհրաժեշտ են վճարման համար.
- կատարել որակի և քանակի հսկումը, այն աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները, որոնք կատարվում են շինարարական պայմանագրի իրականացման շրջանակում,
- գտնել շինարարության ժամանակ առաջացող պրոբլեմները և առաջարկել այն գործողությունները, որոնք

անհրաժեշտ կլինեն աշխատանքները արագացնելու և աշխատանքային ժամանակացույցը պահպանելու համար .

- հսկել բոլոր այն հարցերը, որոնք կապված են շինարարական աշխատանքներն անվտանգ իրականացնելու հետ .
- կատարել անհրաժեշտ գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի վերահսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր),
- կատարել աշխատանքների ծավալների չափագրումներ և մասնակցել կատարողական փաստաթղթերի կազմմանը և հաստատմանը,
- շինարարության ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել Հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ՝ կցելով լուսանկարները, անհրաժեշտ գծագրերը, ծածկված աշխատանքների ակտերը, փորձարկման ակտերը, սերտիֆիկատները:
- շինարարության ողջ ընթացքում ապահովել տեխ. հսկիչի մշտական ներկայությունը օբյեկտում

**Նորմատիվային պահանջներ – Տեխնիկական հսկողությունները իրականացնել ՀՀ Քաղաքշինության մասին օրենքի, Քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի, «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» և այլ իրավական ակտերին համաձայն:**

\* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փյալ փարվա դեկտեմբերի 15-ը:

\*\* Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

Հավելված թիվ 1.1  
 «02» հուլիսի 2018թ. կնքված  
 ՈՒԱԿ-ԲՄԱՇՁԲ-18/33 ծածկագրով պայմանագրի

**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱԳԱԾԻԿ**  
**Վ. Ա. ՖԱՆԱՐՁՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՈՒՌՈՒՑՔԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի ԾԱՌԱԳԱՅՈՒՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ 3-ՐԴ ՀԱՐԿՈՒՄ ՉՏԵՆԻԿԱԿԱՆ ՀԱՐԿՈՒՄ ՅՈՂԱԹԵՐԱՊԻԱՅԻ ԲԱԺՆԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

Գ/Գ	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավոր գինը հազ. դրամ	ընդամենը հազ. դրամ
1	2	3	4	5	6
<b>1-1. Քանդման աշխատանքներ</b>					
<b>Աստիճանավանդակի ապամոնտաժման աշխատանքներ</b>					
1	Ապամոնտաժել աստիճանավանդակի մետաղական բազրիքները, փայտե բռնածողի հետ միասին -25.7մ	մ <sup>2</sup>	23,10	0,29	6,75
2	Փայտե դռների և պատուհանների ապամոնտաժում	մ <sup>2</sup>	13,40	1,76	23,63
3	Մետողե դռների և պատուհանների ապամոնտաժում	մ <sup>2</sup>	7,50	1,03	7,73
4	Զանդել դեպի տանիք բարձրացող պատուհանի շարած պատը	մ <sup>3</sup>	0,35	6,83	2,39
5	Զանդելաստիճանի նկուղային հատվածի հատակը	մ <sup>3</sup>	1,80	6,83	12,30
6	Մաքրել առաստաղի ներկանյութը	մ <sup>2</sup>	202,50	0,32	63,83
7	Մաքրել պատերի ներկանյութը	մ <sup>2</sup>	250,00	0,14	34,24
8	Մաքրել պատուհանների և դռների շեպերի ներկանյութը գաջի հետ միասին	մ <sup>2</sup>	20,60	0,14	2,82
9	Զանդել փոստրակ սավվածքի բազալտե եզրաքարերի համար	մ <sup>3</sup>	0,60	0,56	0,34
10	Շին. աղբի բարձում և տեղափոխում 12կմ հեռավորության վրա	մ <sup>3</sup>	13,20	4,24	56,02
<b>Տեխնիկական հարկի ապամոնտաժման աշխատանքներ</b>					
1	Ապամոնտաժել ռենտգեն տնտեսությունների էլ մալուխները, սարքավորումները և տեղափոխել տարածքից	հատ	7,00	0,54	3,78
2	Ապամոնտաժել էլ. մալուխները	մ	30,00	0,12	3,47
3	Ապամոնտաժել հատակի լինոլյումը շրիշակների հետ միասին	մ <sup>2</sup>	132,40	0,08	10,28
4	Մաքրել առաստաղի ներկանյութը	մ <sup>2</sup>	163,20	0,32	51,44
5	Մաքրել պատերի ներկանյութը և պաստառները	մ <sup>2</sup>	406,70	0,14	55,71
6	Մաքրել վիտրաժների, պատուհանների և դռների շեպերի ներկանյութը գաջի հետ միասին	մ <sup>2</sup>	18,00	0,14	2,47
7	Փայտե դռների և պատուհանների ապամոնտաժում	մ <sup>2</sup>	16,20	1,76	28,57
8	Մետողե դռներին ապամոնտաժում	մ <sup>2</sup>	7,70	1,03	7,93
9	Ապամոնտաժել փայտաշեղային սալերով պատուհանագոգերը b=0,15մ - 4,0գծմ	մ <sup>2</sup>	0,60	1,76	1,06

10	Ապամոնտաժել առկա միջնորմները	մ <sup>3</sup>	2,50	6,83	17,08
11	Ապամոնտաժել փայտաշեղային սալերով սակառները խողովակները փակելու համար	մ <sup>2</sup>	4,80	1,76	8,47
12	Ապամոնտաժել նախկին հարթ տակիցի Ø100մմ ջրահեռացման խողովակները	մ	7,20	0,25	1,80
13	Շին. աղբի բարձում և տեղափոխում 12կմ հեռավորության վրա	մ <sup>3</sup>	17,85	4,24	75,76
<b>1-2. Շինարարական աշխատանքներ</b>					
<b>Շինարարական աշխատանքներ</b>					
1	Միջնորմի կառուցում խարամաբլոկներով 150մմ հաստությամբ	մ <sup>3</sup>	3,00	18,37	55,11
2	Պահոցային միջնորմային պատերը հաստեցնել B15 դասի բետոնով	մ <sup>3</sup>	3,50	37,92	132,73
3	Բետոնով անցքերի փակում միջնապատերում և տակիքում B15 դասի բետոնով	մ <sup>3</sup>	0,30	37,92	11,38
4	Բացվածքների շարում խարամաբլոկներով 200մմ հաստությամբ	մ <sup>3</sup>	1,10	17,03	18,73
5	Առաստաղի ծեփամածկում և ներկում լատեքսային ներկով	մ <sup>2</sup>	163,20	1,30	212,08
6	Պատերի գաջե սվաղում	մ <sup>2</sup>	80,50	1,81	146,03
7	Պատուհանների և դռների շեպերի նաև պլաստիկից պատուհանագոգերի տակ գաջե սվաղի իրականացում	մ <sup>2</sup>	18,00	4,41	79,40
8	Պատերի ծեփամածկում և ներկում ակրիլային ներկով, շեպերի հետ միասին	մ <sup>2</sup>	406,70	1,53	620,48
9	Կերամոգրանիտ շրիշակների տեղադրում h=10սմ L=62.5մ	մ <sup>2</sup>	6,25	8,63	53,92
10	Նախատեսել պլաստիկ շրիշակներ h=7սմ	մ	18,40	0,59	10,78
11	Սանհանգույցների և լվացարանների հատվածի սվաղում ցեմենտավազային շաղախով	մ <sup>2</sup>	4,50	1,43	6,43
12	Սանհանգույցների կցնցողարանի պատերը սվաղել ցեմենտավազային շաղախով	մ <sup>2</sup>	60,00	1,43	85,74
13	Նույնի երեսապատում հախճասալով, նախապես հարթեցված ցեմենտավազային սվաղի վրա	մ <sup>2</sup>	60,00	4,97	298,43
14	Սանիտարական խողովակները փակել գիպսատվարաթղթով	մ <sup>2</sup>	9,00	2,29	20,59
15	Ուղղորդ պրոֆիլ - թերմոսալիկ UW 50x40	գմ	15,00	0,64	9,57
16	Յենակի պրոֆիլ CW 50x50	գմ	39,00	0,74	28,71
17	Պատուհաններին տեղադրել պլաստիկ պատուհանագոգեր (b=3սմ)	մ	4,50	2,94	13,25
18	Պատուհանների պատուհանագոգերը դրսի կողմից սվաղել 2սմ հաստության ցեմ/ավազային շաղախով	մ <sup>2</sup>	0,50	1,87	0,93
19	Ջեռուցման մարտկոցները փակել լամինացված վահաններով	մ <sup>2</sup>	4,00	4,25	16,98
20	Ջեռուցման մարտկոցները և խողովակները ներկել յուղաներկով պատերի համապատասխան գույնի	մ <sup>2</sup>	12,50	0,64	7,96
<b>Աստիճանավանդակ և մուտքի հարթակ</b>					0,00
1	Գլխավոր մուտքի հարթակի կառուցում հիմքերի հետ միասին B15 դասի բետոնով	մ <sup>3</sup>	1,00	36,87	36,87
2	Մուտքի հարթակի երեսապատում բազալտե սալիկներով d=30մմ	մ <sup>2</sup>	2,25	20,24	45,54
3	Բետոնե հարթակի և աստճանի կառուցում B15 դասի բետոնով	մ <sup>3</sup>	1,50	50,34	75,52
4	Առաստաղի ծեփամածկում և ներկում լատեքսային ներկով	մ <sup>2</sup>	202,50	1,30	263,15
5	Պատերի գաջե սվաղում	մ <sup>2</sup>	50,00	1,81	90,70
6	Կիրառվածների, պատուհանների և դռների շեպերի նաև պլաստիկից պատուհանագոգերի տակ գաջե սվաղի իրականացում	մ <sup>2</sup>	20,60	4,41	90,87
7	Պատերի ծեփամածկում և ներկում ակրիլային ներկով, շեպերի հետ միասին	մ <sup>2</sup>	270,60	1,53	412,84
8	Կերամոգրանիտ շրիշակների տեղադրում h=10սմ L=90.0մ	մ <sup>2</sup>	9,00	8,63	77,65
9	Աստիճանները և հարթակը երեսապատել արհեստական գրանիտով	մ <sup>2</sup>	90,00	15,69	1412,12
10	Աստիճանների անկյունային մասում տեղադրել այլումինե ճաղաշար և բռնածող այլումինե խողովակներից	մ	104,00	0,49	51,04
11	Աստիճանների վրա տեղադրել այլումինե ճաղաշար և բռնածող այլումինե խողովակներից	մ	30,00	21,74	652,18
12	Նոր բազալտե եզրաքարերի կառուցում 150x300 մմ չափերի բետոնե հիմքի վրա (B15 դասի)	մ	15,40	8,96	138,03
13	Բետոնի հիմքերի իրականացում B15 դասի բետոնով	մ <sup>3</sup>	1,00	36,87	36,87
14	Ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում h=5սմ հաստությամբ	մ <sup>2</sup>	55,00	4,02	221,10
15	Խճային շերտի իրականացում h=15սմ	մ <sup>2</sup>	55,00	1,15	63,48
16	Սավառիցի աստիճանների երեսապատում բազալտե սալիկներով d=30մմ	մ <sup>2</sup>	3,50	20,24	70,85

17	Յենատերի սվաղում ցեմ/ավազային սվաղով մետաղական ցանցի վրա	մ <sup>2</sup>	24,50	1,47	36,09
18	Բազալտե գլխադիրի տեղադրում h=50մմ b=350մմ L=27.2մ	մ <sup>2</sup>	9,52	17,85	169,91
<b>Մուտքի բարձակի երեսապատում</b>					
1	Մետաղական կարկասի իրականացում ուղղանկյուն խողովակից	տ	0,05	86,24	4,49
2	Խողովակ 20x2	մ	20,00	0,47	9,31
3	Խողովակ 30x2	մ	18,00	0,71	12,75
4	Մուտքի բարձակը երեսպատել դարչնագույն գույնի այլուկաբոնդով	մ <sup>2</sup>	5,00	14,98	74,88
5	Ցինկապատ հարթ թիթեղից ծածկույթ 0,55մմ հաստությամբ	մ <sup>2</sup>	2,00	3,34	6,68
6	Ցինկապատ հարթ թիթեղից գոգնոցի և ճռի իրականացում	մ <sup>2</sup>	8,00	3,35	26,83
7	Ձագարների տեղադրում Ø100մմ	հատ	1,00	4,28	4,28
